ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2018 թվականի N 09

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջներով, համաձայն Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2017 թվականի մարտի 13-ի N 15 որոշման և Գրիգոր Ավագյանի դիմումի՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 2.64377 հա վարելահողի ընդլայնման համար ուղղակի վաճառքով Գրիգոր Ավագյանին օտարվող համայնքային սեփականության 0214-0039 ծածկագրի 0.37327 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամասի նկատմամբ կնքել ուղղակի վաճառքի պայմանագիր:
2. Գրիգոր Ավագյանին՝ հողամասի կադաստրային գնի չափով՝ 75590 /յոթանասունհինգ հազար հինգ հարյուր իննսուն/ ՀՀ դրամ գումար վճարել համայնքի բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 12

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2018 թվականի N 10

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի, Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 53 և N 57-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքի բյուջեի 4726՝ հուղարկավորության նպաստներ, հոդվածից 30.0 /երեսուն հազար/ դրամ հատկացնել Ջուլիետա Գարեգինի Ավետիսյանին:
2. Համայնքի բյուջեի 4729՝ այլ նպաստներ բյուջեից, հոդվածից 10.0 /տասը հազար/ դրամ հատկացնել համայնքի բնակիչ Կարմեն Սեմյոնի Ջրաղացպանյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. փետրվարի 12

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2018 թվականի N 11

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Ալեքսանդր Սողոմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 030-039 կադաստրային ծածկագրի 0.08 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (վկայական N 1317420) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել 9 փողոց N 19 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2018 թ. փետրվարի 12

գ. Նոր Արտամետ